

ՆՇԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԸ



Շաալուն եւ բեղուն գործունեություն կը մաղթեմ Հ.Կ.Բ.Մ.-ի կրթական, ընկերային եւ բարեսիրական յետագայ գործունեության»:

Այս խրախուսիչ պահէն ետք, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան ատենախոսութեան Գործադիր Դիրտի Ծերեճեան փոխանցեց միութեան խօսքը. «Հայ Կրթական Բարեսիրական Միութիւնը 40 տարեկան է: 40 տարիներ անցած են այն օրէն երբ խումբ մը յարգարժան ազգայիններ՝ Պետր Եպս. Ծերեճեան, Յարութիւն Կուժուհի, Օնիկ Ծամպուլեան, տղթ: Գարեգին Պուճիգանեան, տղթ: Լեւոն Փիլոյեան, մեծը Նուպար Թուրքարգիսեան, Աւետիս Տեմիրճեան, Սարգիս Սարգիսեան, Վերոնի Ծերեճեան, Յովհաննէս Հաննէսեան եւ Ազատուհի Սիմոնեան, 1969 Ղեկտեմբեր 22-ին, Պէյրութի մէջ հիմը կը դնեն միութեան մը, որուն նպատակը կ'ըլլայ զբաղիլ հայ համայնքին կրթական, առողջապահական, բարեսիրական եւ ընկերային հարցերով:



Անի Եփրեմեան

Հ.Կ.Բ.Մ.-ի նշանաբանն է «Օգնէ եւ օգնութիւն պիտի գտնես», որուն ան կը մնայ հաւատարիմ: Իր գործունեութեան ընթացքին Հ.Կ.Բ.Մ.-ը համայնքային կամ քաղաքական նախընտրութիւններ չի դրսեւորեր: Հայ ընտանիքի բարօրութիւնը կը կազմէ Հ.Կ.Բ.Մ.-ի գլխաւոր մտահոգութիւնը: Հ.Կ.Բ.Մ.-ը կը փորձէ թեթեւցնել հայ ընտանիքներու տնտեսական մտահոգութիւնը: Դժուարութեան օրերուն կ'օգնէ հայ ընտանիքին՝ որպէսզի անոր զաւակները առանց կրթութեան չմնան, կ'աջակցի հայ ընտանիքին՝ որպէսզի անոր առողջապահական հոգերը թեթեւան:

Հ.Կ.Բ.Մ.-ը ըլլալով հանդերձ բարեսիրական ու կրթասիրա-



Լիանա Յարութիւնեան

կան միութիւն մը, անոր գործունեութեան մէջ անպայմանօրէն պէտք է յիշել հայ մշակոյթը հայ եւ օտար հանրային կարծիքին ներկայացնել միտող նախաձեռնութիւնները, որոնք կը կատարուին հիմնականօրէն Հ.Կ.Բ.Մ. Տիկնայն Օժանդակ Մարմնի եւ ապա Արուեստասիրաց Համախմբումի կողմէ:

Հայ ազգային-հասարակական կեանքը յուզող հարցերն ու տագնապները, անոնք ըլլան հայրենական թէ սփիւղեան, եղան նաեւ Հ.Կ.Բ.Մ.-ի մտահոգութիւնը: Հ.Կ.Բ.Մ.-ը ապրեցաւ ու



Սարգիս Նաճարեան

Շիրազ Ծերեճեան

կ'ապրի հայրութեան տագնապներով, Հայաստանով ու Հայ Դատով: Այս իմաստով Հ.Կ.Բ.Մ.-ը այսօր հանրութեան կը ներկայանայ առաջնահերթաբար իր ազգային-հայրենասիրական դիմագիծով: Այդ դիմագիծը Հ.Կ.Բ.Մ.-ը ժառանգեց հին Սահակեան վարժարանէն, որուն համեստ երդիքին տակէն տողանցեցին Տիրուհիներ, Էլճանեաններ, Էլոյեաններ, Ժամկոչեաններ, Գանգրուհիներ եւ հայրենասէր ու ազգասէր Նուիրեալներու ամբողջ փառանքներ: Այս նուիրեալներուն միութիւնն է նաեւ



Երուանդ Քէշիշեան եւ Սարիա Յովսէփեան

Հ.Կ.Բ.Մ.-ը: Մենք մեր առօրեայ գործունեութեան ընթացքին կը ներշնչուիք անոնցմով, ու կը շարունակենք ընթանալ այդ ուղիէն, այնպէս ինչպէս այդ ուղիէն ընթացան Հ.Կ.Բ.Մ.-ի հանգուցեալ ղեկավարներ Յարութիւն Կուժուհին, Փարամազ Տօնիկեանը, Ազնի Կիտուրը եւ ուրիշներ:

Այս է Հ.Կ.Բ.Մ.-ի առաքելութիւնը, այս է Հ.Կ.Բ.Մ.-ի հակիրճ պատմութիւնը անցնող 40 տարիներուն ընթացքին: Մեր նախորդները հաւատացին այս առաքելութեան, այսօր մենք կը հաւատանք այս առաքելութեան, եւ այս հաւատքին վրայ պիտի



Գերաշնորհ Տէր Նորայր Եպս. Ալըքեան

կառուցենք Հ.Կ.Բ.Մ.-ի յաջորդ ամեակները, որոնք վստահ ենք շատ ու շատ պիտի ըլլան»:

Հ.Կ.Բ.Մ.-ի վարչութեան անունով, տիկնիս Հորի Ծերեճեան շնորհակալութեան խօսք ուղղեց Հ.Կ.Բ.Մ.-ի հին ու նոր բոլոր ծառայողներուն եւ բարեկամներուն, եւ այս ուրախ առիթով ծառայաբար բեմ հրաւիրուեցան տիկնիս Չուարթ Նաճարեան, տղթ: Սիրվարդ Չօպանեան-Նալպանտեան, պրն. Հայկարամ Գալիկեան, Վասիլ Ազեան, ստանալու Հ.Կ.Բ.Մ.-ի վարչութեան կողմէ իրենց յատուկ յուշանուէրները:



Լուսինն եւ Յիւրի Բանճարեան

Հ.Կ.Բ.Մ.-ի հիմնադրութեան առիթով, միութիւնը ստացած էր բազմաթիւ շնորհակալութիւններ: Յարգելի հանդիսաւարը ներկայութեան ընթացքէն Սփիւռքի Նախարարուհի Հրանտի Յակոբեանի եւ Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան շնորհակալութիւնները: Հ.Կ.Բ.Մ.-ի 40-ամեայ ազգային գործունեութիւնը անկատար մնացած չէր Մեծն Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառի ուշադրութեան: Այս ուրախ առիթով Արամ Ա. վեհափառը գնահատելով Հ.Կ.Բ.Մ.-ի ազգային, բարեսիրական, կրթական ծառայութիւնները, միութիւնը պարգեատրեց կոնդակով մը, զոր ընթացքով համար բեմ հրաւիրուեցաւ Գերաշնորհ Տէր Նորայր Եպս. Ալըքեանը: Կոնդակի ընթացումէն ետք, Գերաշնորհ Տէր Նորայր Եպս. պահպանիչով փակեց 40-ամեակին նուիրուած գնահատելի հանդիսութիւնը:

Երեւանի մէջ Երկուշաբթի օր իր աշխատանքներուն սկսաւ 1909-ի Ապրիլին, Ատանայի մէջ տեղի ունեցած հայկական կոտորածներու 100-րդ տարելիցին նուիրուած երկօրեայ միջազգային գիտատնորդով:

Գիտատնորդը սկսաւ տէրունական աղօթքով, որմէ ետք ընթերցուեցաւ Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը: Գիտատնորդի մասնակիցներուն իր ողջոյնի խօսքը ուղղեց Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Սպարտակ Մէլքոնեանը: Ան իր խօսքին մէջ նշեց, որ այսօր առիթ կ'ընձեռնուի անդրադառնալու ոչ միայն այդ իրադարձութեան պատմական գնահատմանը, վեր հանելու այդ տարիներուն տեղի ունեցած բոլոր իրողութիւնները, այլեւ մտորելու այն խնդիրներուն մասին, որոնց առջեւ կանգնած են այսօր Հայաստանը եւ հայութիւնը: Նախարարը իր համոզումը յայտնեց, որ այս միջոցառումը լուրջ ներդրում պիտի հանդիսանայ հայկական պահանջատիրութեան եւ իրատունքներու պաշտպանութեան գործին:

Սփիւռքի նախարար Հրանտի Յակոբեան եւ կարեւոր նկատեց գիտատնորդի կազմակերպումը, ընդգծելով, որ Ատանայի կոտորածները նախերգանքն էին Հայոց Մեծ եղեռնին՝ 1915-1923 թուականներու Յեղասպանութեան: Ըստ Հ. Յակոբեանի, գիտակցանքերը կը գրեն եւ կը խօսին Ատանայի ջարդերուն մասին, սակայն հայ հասարակութիւնը եւ միջազգային համայնքը այնքան ալ ծանօթ չեն անցեալի այդ իրադարձութիւններուն, որոնց պատճառն այն է, որ շեշտելով 1915 թուականի ջարդատիրութիւնը՝ ստուերի մէջ կը մնան Ատանայի կոտորածները:

«Մենք մեր ապրելով, մեր հօգը հայրենքը կառուցելով, Սփիւռքը հայ պահելով կը յարգենք մեր գոհերի յիշատակը եւ կը պայքարենք հօգը, ուժեղ եւ կարող հայրենիք ունենալու համար», նշեց նախարար Յակոբեանը:

Հայոց Յեղասպանութեան քանգարանի տնօրէն Հայկ Գեմոյեանի խօսքով, Ատանայի ջարդերը, ինչպէս որեւէ զանգուածային կոտորած եւ ցեղասպանութիւն, ունին իրենց հոգեբանական դրսեւորումները. առաջին հերթին՝ նախադրեալներու ձեւով: Գեմոյեան նման նախադրեալներ համարեց 1908 թուականին Օսմանեան Թուրքիոյ մէջ տեղի

ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ունեցած յեղաշրջումը, որ պէտք է որոշ խեղում յառաջացնէր դարերով ամրագրուած օսման հասարակութեան կրօնական, քաղաքական, տնտեսական, մշակութային հաստատագրուած արժեքներուն մէջ:

«Մա աղոթէ իսկ իր մէջ կրում է բռնութեան ներուժ, քանի որ ստիպուած էին տրանսֆորմացիայի (փոխակերպման-խմբ.) ենթարկել հաստատուած արժեհամակարգը: Երբ ջարդն արարուել էր, մահ-մեղականների մեծ մասը փնտռում էին պարտազրկելը, քանի որ շատերը պարտքեր ունէին քրիստոնեաներին: Այն հանգամանքը, որ իրենք պարտքեր ունեն քրիստոնեաներին, ատելութեան զգացում էր առաջացնում նրանց մօտ եւ մղում համապատասխան գործողութիւններին», նշեց Հ. Գեմոյեանը:

Անոր կարծիքով, հայութեան մօտ հոգեբանական խոր ցնցումի առիթ դարձաւ նաեւ այն, որ կոտորածներու երկրորդ փուլին ընթացքին իր մասնակցութիւնը բերած էր նաեւ բրթական բանակը, որովհետեւ ասիկա այն բանակն էր, որ առաջ եկած էր «եղբայրութեան, հաւասարութեան, ազատութեան» կոչերով՝ համարուելով «յեղափոխութեան գիւնդները»: Ատանայի կոտորածներուն ընթացքին ակնատեսները վկայած են, որ սպանութիւնները իրականացուած են ամենայն դաժանութեամբ:

Հ. Գեմոյեան տեղեկացուց, որ Ատանայի կոտորածը վաւերագրուած է բազմաթիւ օտարերկրեայ ներկայացուցիչներու կողմէ, ինչպէս նաեւ 100-է անլի լուսանկարային նիւթերով:

Պատմաբան Համիտ Բոզարպուլանի խօսքով, 1909 թուականին ոչնչացուեցաւ հայերու ունեցումը, իսկ 1915 թուականին՝ բռնագրաւուեցաւ եւ իւրացուեցաւ: 20րդ դարակիզիւն Օսմանեան Թուրքիոյ մէջ կ'ընթանար բրթացման գործընթաց, որ կը

սահմանուէր անով, թէ՛ ազգը պէտք է թուրք ըլլայ, իսկ միւս ազգերը կը համարուին ներքին թշնամիներ: Շատերը լաւատեսօրէն զուգահեռներ կը կատարէին 1908 թուականին Օսմանեան կայսրութեան ներս տեղի ունեցած յեղափոխութեան եւ ֆրանսականի միջեւ՝ զայն համարելով վերջինիս շարունակութիւնը: Սակայն բուն Օսմանեան կայսրութեան մէջ ֆրանսական յեղափոխութիւնը կը նկատուէր իրրեւ վտանգ իրենց պետութեան համար:

Հայոց Յեղասպանութեան քանգարանի փոխտնօրէն Սուրէն Մանուկեան նշեց, որ 20րդ դարու սկզբին մեծ էր խզումը Օսմանեան կայսրութեան, մասնատրապէս Կիլիկիոյ հայկական արդիականացող եւ յետամնաց թուրք համայնքներ: Վերջիններս գոյութիւն ունեցող այդ խզման լուծումը գտան կոտորածների մէջ: Հայկական արդիականացման ծրագիրը անարար մնաց ոչ թէ հայերի, այլ յետամնաց թուրք համայնքի պատճառով», յայտնեց Մանուկեանը:

«Այն նման էր երդուական քաղաքի թէ՛ իր արտաքին տեսքով, թէ՛ տնտեսութեան կազմակերպման առումով: Փաստօրէն, մի միջավայրում կային երկու իրականութիւն՝ արդիականացող հայ եւ յետամնաց թուրք համայնքներ: Վերջիններս գոյութիւն ունեցող այդ խզման լուծումը գտան կոտորածների մէջ: Հայկական արդիականացման ծրագիրը անարար մնաց ոչ թէ հայերի, այլ յետամնաց թուրք համայնքի պատճառով», յայտնեց Մանուկեանը:

Գոլտ-Փրոֆ. Արտէմ Օհանջանեան ներկայացուց Ատանայի դէպքերը ասորիա-հունգարական փաստաթուղթերու լոյսին տակ. այդ գրառումները կը վերաբերէին 1909-ի Ապրիլ 15-էն Մալտեմբեր 9-ի միջեւ ինկած ժամանակահատուածին: Ա. Օհանջանեան իր զեկոյցին մէջ առանց մեկնաբանութիւններու ներկայացուց Ատանա նահանգին

մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն վերաբերեալ հաղորդագրութիւնները, որոնք գրի առած էր Մերսինի մէջ Ասորիա-Հունգարիոյ հիւպատոս Տարապը:

ԳԱԱ Արեւելագիտութեան հիմնարկի տնօրէն, բրթագետ Ռուբեն Սաֆրաստեան նշեց, որ Ատանայի կոտորածները պէտք է նկատուէր իրեն ցեղասպան քաղաքականութեան դրսեւորում: Անոր խօսքով, 1876 թուականի Մալտեմբէ Օսմանեան կայսրութեան կողմէ մշակուած է ցեղասպանութիւն իրադարձութիւնը առաջին ծրագիրը, որ ուղղուած էր պոլկար ժողովուրդին դէմ: Սակայն շնորհիւ այն իրողութեան, որ անոնք անկախութիւն ձեռք բերած էին, այդ ծրագիրը այլեւ գործարդել կարելի չէր: Ռ. Սաֆրաստեանի գնահատումով, Ատանայի վերաբերեալ նման ծրագիր չէ յայտնաբերուած, սակայն վերլուծելով դէպքերը՝ կարելի է հաստատել, որ գոյութիւն ունեցած է հայերուն իրրեւ ազգային շահունի խումբ վերացնելու նպատակադրութիւնը: Հայրերու դէմ նման գործողութիւններ իրականացնելու պատճառներէն մէկը բրթագետը կը նկատէ հայերու անկախ եւ քաղաքացի կեանքը: Ըստ Ռ. Սաֆրաստեանի, կոտորածներու առաջին փուլին մեծ գոհեր չեղան, շնորհիւ կազմակերպուած ինքնապաշտպանութեան, սակայն երկրորդ փուլին, երբ հայերը հաւատացին երիտթուրքերուն եւ յանձնեցին զէնքը, գոհերուն թիւ անհամեմատ մեծ եղաւ:

Գիտատնորդի ընթացքին զեկոյցներով հանդէս եկան նաեւ գիտատնորդի թեմայի հիմնախնդիրներով զբաղող պատմաբան մասնագետներ՝ Հայաստանէն, Իտալիայէն, Հունգարիայէն, Ասորիայէն, Ֆրանսայէն, ԱՄՆ-էն եւ Շուեդէն:

Ֆրանսահայ պատմաբան Քրտ Մուրաֆեան ներկայացուց «Կիլիկիան եւ կիլիկիահայութիւնը երդուագի ճանապարհորդներու ուղեգրութիւններուն մէջ» զեկոյցը:

«Ես անցայ այդ տարածքով եւ այդ միջնադարեան թագաւորութեան վիճակակերպին ուրուականը տեսայ», 1936-ին անցնելով Կիլիկիայով՝ գրած է ճանապարհորդ մը, յայտնեց Սորպոնի համալսարանի դասախօս Մուրաֆեան:

Գիտատնորդի առաջին օրը զեկոյցով հանդէս եկաւ նաեւ Իվ Թերմոն: